Մաքրենք այգին

«Ո՞ւմ կարող ենք հրավիրել օգնելու մեզ»:

Լյուսի Սթիվենսոն Էվել
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Անգլիայում:

Հովնանն ավարտեց ուտելիքի վերջին կապտառը և ժպտաց: Ընթրիքը միշտ ավելի զվարճալի էր լինում, երբ գալիս էին միսիոներները:

«Մենք ցանկանում ենք ձեզ հետ կիսվել ծառայության մասին ուղերձով»,- ասաց Քույր Քերլը: «Ինչո՞ւ է կարևոր ծառայել ուրիշներին»:

«Քանի որ դա ուրախացնում է Հիսուսին»,- ասաց Էլիզան՝ Հովնանի փոքր քույրը:

«Դու իրավացի ես: Դա Նրան շատ է ուրախացնում: Եվ երբ մենք օգնում ենք ուրիշներին, դա մեզ նույնպես ուրախացնում է»,- ասաց Քույր Քրիսթենսենը: «Դուք գիտե՞ք որևէ մեկին, ով օգնության կարիք ունի»:

Հովնանը մի պահ մտածեց: «Ես չեմ կարողանում մտաբերել որևէ անձնավորության, բայց մեր դպրոցի այգին օգնության կարիք ունի»:

«Հրաշալի գաղափար է»,- ասաց մայրիկը:

Հովնանի դպրոցն ուներ այգի, որտեղ նրանք կազմակերպում էին բացօթյա միջոցառումներ: Բայց երկար ժամանակ ոչ ոք հոգ չէր տարել այգու մասին: Թփերը չափից շատ էին մեծացել: Այգին լցված էր նաև մոլախոտով:

«Մենք կցանկանայինք օգնել ձեզ այդ հարցում»,- ասաց Քույր Քերլը: «Ո՞ւմ կարող ենք հրավիրել օգնելու մեզ մաքրել այն»:

«Մեր զարմիկներին»,- ասաց Հակոբը՝ Հովնանի եղբայրը:

«Եվ Երեխաների միության մեր դասարանին»,- ասաց Հովնանը:

Հաջորդ օրը մայրիկը դպրոցում խոսեց մեկի հետ, որպեսզի թույլտվություն ստանար: Այգին մաքրելու համար նրանք մի օր ընտրեցին: Ապա մայրիկն օգնեց Հովնանին և իր քրոջն ու եղբորը՝ կանչելու նրանց զարմիկներին և Երեխաների միության դասարանին:

Մի քանի շաբաթ անց, Հովնանը և իր ընտանիքը հանդիպեցին միսիոներներին դպրոցում: Այնտեղ էին նաև նրանց զարմիկներն ու Երեխաների միության ընկերները: Գործի անցնելու ժամանակն էր:

Հովնանը հագավ մի զույգ մեծ ռետինե այգեգործական ձեռնոցներ: «Նայի՛ր, մայրիկ: Ես մեծ ձեռքեր ունեմ»:

Մայրը ծիծաղեց: «Այդ մեծ ձեռքերով դու կարող ես էտել թփերը»:

Նա Հովնանին տվեց էտելու գործիքը, որը նման էր մի մեծ մկրատի: Ապա նա օգնեց որդուն կտրել չորացած ճյուղերը:

«Սա զվարճալի է»,- ասաց Հովնանը:

Մինչ Հովնանը էտում էր, Էլիզան օգնում էր փորել այգին: Հակոբն օգնեց հայրիկին նոր բույն պատրաստել թռչունների համար: Մյուսները հավաքում էին մոլախոտը և հավաքում փայտերը: Այդ ամենը նրանք հավաքում էին պոլիէթիլենային մեծ տոպրակների մեջ: Նույնիսկ Հովնանի կրտսեր եղբայրը՝ Էզրան, օգնում էր քարեր հավաքելով:

Շուտով այգին մաքուր էր: Հովնանը հաշվեց իրենց լցրած տոպրակները: «Ահա 13 տոպրակ»,- ասաց նա: «Մենք շատ աղբ հավաքեցինք»:

Քույր Քրիսթենսենը ժպտաց: «Այժմ մենք ունենք բոլորի ուժեղ մկանների կարիքը, որպեսզի օգնեն մեզ տեղափոխել տոպրակները մեքենայի մոտ»:

Հովնանը, Հակոբը և Էլիզան վերցրին մեկական տոպրակ: Հովնանը շատ երջանիկ էր, երբ վերջինը մոտեցրեց մեքենային: Միսիոներներին օգնելը զվարճալի էր: Նա ցանկանում էր մի օր նույնպես միսիոներ լինել: Մինչ այդ, կային բազմաթիվ ուղիներ, որոնց նա կարող էր ծառայել: Նա անհամբեր սպասում էր իր հաջորդ նախաձեռնությանը: ●

Դուք ի՞նչ կարող եք անել, որպեսզի օգնեք ձեր շրջապատում: